Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կողմից 2024 թվականի ընթացքում իրականացված և 2025 թվականին նախատեսվող աշխատանքների վերաբերյալ

2024 թվականին մարզում կատարված ցանքերը.

Ընդամենը ցանքեր՝ 3290հա/385,8հա ավելի 2023թ համեմատ

որից՝ հացահատիկ և հատիկաընդեղեն - 1522,7հա/ 492,35հա ավելի

բանջար բոստանային մշակաբույսեր - 232,5հա/ 1,15հա պակաս

կարտոֆիլ - 85,3հա/ 1,0 հա պակաս

կերային մշակաբույսե - 1439,2հա/ 102,7հա պակաս

տեխնիկական մշակաբույսեր - 10,0հա/ 1.5 հա, պակաս

2024 թվականին ստացված բերքի քանակը՝ ըստ մշակաբույսերի

հացահատիկ և հատիկաընդեղեն - 2660,6 տոննա/ 617,9տ ավելի

բանջար բոստանային մշակաբույսեր - 3356,4/ 237,2տ պակաս

կարտոֆիլ - 1091տ/5,3տ պակաս

պտուղ, հատապտուղ - 6011,6տ/947,3տ ավելի

խաղող - 5684տ/470,5տ պակաս

կերային մշակաբույսե - 21186,5տ/1168,5տ ավելի

տեխնիկական մշակաբույսեր - 21,3տ/ 3,5 տ պակաս

Արտադրված 5684 տոննա խաղողից մթերվել է 3755,2 տոննա:

- Կատարվել է 438 հա աշնանացան, որից 404 հեկտարը ցորեն, 34 հեկտարը գարի:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակներում մարզի 4 համայնքների 303 շահառու կատարել է 482,72 հա հացահատիկային և կերային մշակաբույսերի ցանք: ՀՀ կառավարության կողմից փոխհատուցված գումարը կազմում է **36 119 176 ՀՀ դրամ:**

Ծրագրով սահմանված կարգով վարչության կողմից իրականացվել է գարնանացան հացահատիկային մշակաբույսերի 15 տոկոս ցանքատարածությունների ընտրանքային մոնիթորինգ:

Վարչության կողմից տեղերում ուսումնասիրվել և գնահատվել են արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը հասցված վնասները.

- **սելավի** - հետևանքով առաջացած հետևանքով Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի բնակիչներին (չորս) պատկանող 65 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ խեղտվել են, վարչության մասնագետները տեղում ուսումնասիրել և գնահատել են վնասի չափը, որը կազմել է 2, 990 մլն դրամ:
- **կարկտահարություն** - գրանցվել է Վայք համայնքի Հերհեր, Մարտիրոս, Զառիթափ, Գոմք, Արտավան, Սարավան բնակավայրերի 387հա պտղատու այգիների, բանջարբոստանային և հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների վրա, վնասի չափը կազմել է 296,8մլն. դրամ, Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի 45հա պտղատու այգիներ, վնասի չափը կազմել է 30,4մլն. դրամ: **Ընդամենը մարզում կարկտահարվել է 432 հա, վնասի չափը կազմել է 327,2 մլն. դրամ:**
- Վայրի և գիշատիչ կենդանիների, մասնավորապես արջի կողմից մարզի համայնքներում և բնակավայրերում հասցված վնասի չափը կազմել 9,5455 մլն. դրամ:
- **2024 թվականի** հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված անասնագլխաքանակը.

Խոշոր եղջերավոր կենդանիներ	-	14988 գլուխ
որից կովեր	-	6031 գլուխ
մանր եղջերավոր կենդանիներ	-	16100 գլուխ
խոզեր	-	1762 գլուխ
մեղվաընտանիքներ	-	22042 փեթակ
թռչուններ	-	44422 թև

Վարչության կողմից վերահսկվել է անասնաբուժական ծառայությունների կողմից անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ բոլոր միջոցառումների կատարման ընթացքը:

Իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. բրուցելյոզ խ. ե. կ, 13459գ
2, բրուցելյոզ մ. ե. կ. 10379գ
3. լեյկոզ խ. ե. կ. 628գ
4. տուբերկուլինիզացիա 970գ
5. մաշկաբորբ խ. ե. կ 6604գ
6. սիբիրախտ խ. ե. կ 25196գ
7. սիբիրախտ ձիերի 777գ
8. Դաբաղ խ. ե. կ 45698գ
9. դաբաղ մ. ե. կ 13258գ
10. Էմկար խ. ե. կ 28374գ
11. Ծաղիկ մ. ե. կ 5768գ

2024 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ համարակալվել են 5237 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ՝ ծախսվել է 4,98մլն. դրամ:

Մարզում հակահամաճարակային իրավիճակը հիմնականում եղել է կայուն, վարակիչ հիվանդություններից չեն գրանցվել մասսայական անկումներ:

Ս/թ–ի սեպտեմբեր ամսին Գետափ բնակավայրի մեկ ֆերմերի մոտ գրանցվել է խոզերի մասսայական անկում (ընդամենը 113գլուխ, որից 21գլ հասակավոր, 92 գլուխը 2-3 ամսական), որի պատճառը ըստ հանրապետական անասնաբուժական լաբորատորիայի փորձաքնության արդյունքների եղել է կենդանիների կերային մասայական թունավորումը: Վարչության մասնագետների կողմից կազմակերպվել է անկած կեդանիների տեղափոխումը և թաղումը համաձայն «Անասնաբուժության մասին» ՀՀ օրեքի:

Ոռոգման սեզոնին <<Եղեգնաձոր>> ՋՕ ընկերության կողմից ջրտուքը կազմել 10 515 000մ^3, հասույթը կազմել է 115,665 մլն դրամ, դեկտեմբերի 20-ի դրությամբ գանձվել է 104, 503մլն դրամ, կամ 90.0% :

Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում, Վայոց ձորի մարզում իրականացված շինարարական աշխատանանքներն են.

1. Վերականգնվել է 1988մ Մալիշկա-Եղեգնաձոր ջրանցքը, Մալիշկայի Մոզի աղբյուրի տարածքից հասնում է Մալիշկա բնակավայր: Շահառուների թիվը կազմում է 120-160 շահառու, ոռոգվող տարածքը 32հա , գումարը կազմել է 138 142 257 դրամ:

2. Կառուցվել է 5068մ Արփի-Գետափ ջրագիծը, Եղեգնաձորի Հոփիկներ կոչվող հանդամասից մինչև Արփի բնակավայր, 500 շահառու, 250-280հա, գումարը կազմել է 285 506 521 դրամ:

3. Վերականգնվել է Շատին-Գետափ ջրանցքը՝ 1481մ, Շատին-Գետափ ջրանցքը ներառում է՝ Սիսականից վերև կամուջի հարակից տարածքը՝ վաքերով: Ոռոգման ջրից օգտվում է ամբողջ Գետափ բնակավայրը՝ տնամերձ հողամասեր 148հա, սեփականաշնորհված հողատարածքներ 90-100հա, գումարը կազմել է 105 397 203 դրամ:

4. Վերականգնվել է Վայքի ինքնահոս ջրատարի ձախ ճյուղի խողովակաշարը՝ 150մ, Գնդեվանքի հարակից տարածքից մետաղական /D-820մմ/ խողովակը փոխվել է , որը ապահովում է Կեչուտ-Զեդեա ջրագծի անխափան աշխատանքը: Ջրագծով ոռոգվում են՝ Գնդեվազ-130հա, Զառիթափ-108հա, Փոռ-120հա, Ազատեկ-350հա /տնամերձ հողամասերը ներառյալ/, Զեդեա-100հա հողատարածքներ, գումարը կազմել է 65 123 460 դրամ:

Մարզում ոռոգման համակարգի արդիականացմանհամար ներդրվել է 684 653 962 դրամ (տեղեկանքը կցվում է) :

- Բույսերի պաշտպանության ծրագրով մարզին անվճար տրամադրված է 280լ «Բրոմեդ» մկնասպան թունանյութ, որը բաշխվել է մարզի Եղեգնաձոր, Արենի, Եղեգիս, Վայք, Ջերմուկ համայնքներին և 3500 հեկտար վարակված վարելահողերի վրա իրականացվել են կրծողների դեմ քիմիական պայքարի աշխատանքներ:

Գյուղատնտեսության ոլորտում պետական օժանդակության ծրագրեր

- ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023թթ. ծրագրի շրջանակում ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար, փոխհատուցման բաղադրիչով, 2024 թվականին քաղաքացիներից ստացվել է մասնակցության 1 դիմում: Ծրագրի շրջանակում թվով 1 շահառուի տրամադրվել է ընդհանուր 129 մլն դրամ, հիմնվել է 7հա խաղողի այգի,փոխհատուցման գումարը կազմել է 32,57 մլն դրամ (Ռինդ բնակավայր):

- **ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-L որոշմամբ հաստատված գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում** 2024 թվականի հաստատվել է 9 հայտ 228,5 մլն դրամի չափով, կնքվել է 73 հումքի(կաթ, խաղող) գնման պայմանագիր, սուբսիդավորվել է 59,2մլն դրամ:

ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-L որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում 2024 թվականին հաստատվել է 11 հայտ 68,5 մլն դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել **է 2,88մլն** դրամ:

- **ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-L որոշմամբ հաստատված տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի** շրջանակում 2024 թվականին ձեռք է բերվել 17 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 5 միավոր տրակտոր, լիզինգի գումարը կազմել է շուրջ 80,3 մլն ՀՀ դրամ, իսկ սուբսիդավորման գումարը՝ շուրջ 33,3 մլն ՀՀ դրամ:
- **Եղեգիս** համայնքում Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (**GIZ**) աջակցությամբ (առաջին վարի ծախսը և սերմացուն տրամադրվել է ընկերության կողմից) կատարվել է **94.8 հա** կերային մշակաբույսերի (առվույտ, կորնգան) ցանք՝ ենթացանքսով (գարի):

Ծրագիրը իրականացվել է ընկերություն -շահառու համաֆինանսավորմամբ:

Բնապահպանություն

- <<Սևանա լճում 2024 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2025 թվականի հունվարի 20-ը ներառյալ>> մարզի համայնքներում (բնակավայրերում) սիգի ապօրինի վաճառքը արգելելու նպատակով իրականացվում է վերահսկողություն և պարբերաբար կատարվում անհատական և համատեղ ստուգայցեր:
- **Վարչության և Վայրի բնության** և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համագործակցության արդյունքում հիմնադրամը մարզում կատարել է 74 922 970 դրամի ներդրում (արևային ֆոտովոլտային կայաններ 6671750 ՀՀ դրամ, էլ. հովիվներ 20 000 000 դրամ, տնկիների աճեցում և խնամք 20 000 000 դրամ և այլն):
  Հիմնադրամը Եղեգիս համայնքի Քարագլուխ և Գողթանիկ բնակավայրերում իրականացրել է անտառատնկման աշխատանքներ, Քարագլուխ բնակավայրում 10 հա տարածքի վրա տնկվել է վայրի տանձենու, խնձորենու և նշենու տնկիներ, Գողթանիկ բնակավայրում 25 հա տարածքի վրա տնկվել է վայրի խնձորենու, տանձենու, նշենու և կաղնու տնկիներ **(տեղեկանքը կցվում է)**:
  - **Վարչության և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան** մասնաճյուղի համագործակցության արդյունքում հիմնադրամը մարզում կատարել է 50,632 մլն դրամի ներդրում (ջրախմոցներ՝ Եղեգանաձոր և Եղեգիս համայնքներ , հիմնական պահպանման գոտիների սպասարկում (Եղեգն, ԱՊԼ, Ազատեկ) և բնապահպանական ծախսեր, արևային տաքացուցիչներ նվիրաբերում (Արտավան) , էլ. հովիվների տրամադրում (Շատին):
- **«Բեզոար»** բնապահպանական հիմնադրամի կողմից տարեկան 8 000 000 դրամ տրվում է Արենի համայնքին՝ որպես վարձակալած տարածքի վարձավճար :

ՇՄԱԳ փորձաքննություններ

- Քննարկվել է Արենի համայնքի Ելփինի ջրամբարի կառուցման (0,9մլն^3) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման» հայտը և տրվել դրական դիրքորոշում:

- Քննարկվել է <<Էլիտ Քնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Սարավան բնակավայրի 8-րդ փողոցի 2/1 հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման (հզորությունը 5 մեգավատ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվությունը և տրվել դրական դիրքորոշում:
- Քննարկվել է <<ՃՇՇ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ԱԿԽ-ի երևակման 3-րդ տեղամասի սահմաններում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական և ավազակոպճային ուսումնասիրության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» փաթեթը և տրվել դրական դիրքորոշում:
- Քննարկվել է <<Արեգ Էներգիա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի բնակավայրի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի (հզորությունը 6 մեգավատ) կառուցման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվությունը և տրվել դրական դիրքորոշում:
- Քննարկվել է <<Մավ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի կրթահամալիրի կառուցման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվությունը և տրվել դրական դիրքորոշում:
- Քննարկվել է <<Մավ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրի կրթահամալիրի կառուցման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվությունը և տրվել դրական դիրքորոշում:
- Քննարկվել է <<Էկո Բիլդինգ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի կրթահամալիրի կառուցման «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման» հաշվետվությունը:
- Քննարկվել է <<Քոնսեքոարդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող նոր
- աղբավայրի կառուցման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմա» հաշվետվությունը և տրվել դրական դիրքորոշում:
- Քննարկվել է Վայոց ձորի մարզի Վայք **համայնքի Հերհեր բնակավայրի 1-ին** փողոց, 19 հողամասի տարածքում գազալցակայանի, հեղուկ վառելանյութի

լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտը և տրվել դրական դիրքորոշում:

- Մարզպետի աշխատակազմի կողմից գյուղատնտեսության և և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետն ընդգրկվել է հետևյալ **միջգերատեսչական հանձնաժողովների կազմում:**

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջգերատեսչական հանձնաժողովի անդամ :

- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից անտառային հողերը վարձակալությամն հիմունքներով տրամադրելու համար (լրացուցիչ եկամուտներ սստանալու համար):

2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ստեղծված «Մարդ- արջ» կոնֆլիկտի կառավարման միջգերատեսչական հանձնաժողի անդամ :

3 . ՄԱԶԾ-ի կողմից ստեղծված «Սևանա լճի ավազանում հողային ռեսուրսների և արժեքավոր էկոհամակարգերի պահպանում և կայուն կառավարում ուղղված բազմակի օգուտների» ծրագրի իրականացման միջգերատեսչական հանձնաժողի անդամ :

2025 **թվականին նախատեսվող աշխատանքների վերաբերյալ**

1. Հերհերի ջրամբարի ջուրը ներառել մարզի ոռոգման համակարգ:
2. Մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին գյուղատնտեսության աջակցության ծրագրերից օգտվելու հասանելիության և հնարավորությունների ապահովում (մեղվաբուծություն, ջերմոցային տնտեսություն):
3. Անասնաբույժ մասնագետների խիստ սպակաս, միջին տարիքը 62-63 տարեկան է:

ոլորտի հիմնախնդիրներն են՝

- ցածր աշխատավարձ
- տրանսպորտային միջոցի բացակայություն (բնակավայրից-բնակավայր, հեռագնա արոտավայրեր այցելությունների, շտապ դեպքերին արձագանքերու համար):
- Սոցիալակն փաթեթի բացակայություն

3. Մարզում թափառող շների համար կացարանի կառուցում:
4. Սպանդանոցային մորթի իրականացում:
5. Մարզի ջրհավաք ավազանի ջրային ռեսուրսների (Արփա և Եղեգիս գետերի) արդյունավետ կառավարում, ջրամբարների կառուցում:
6. Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների և համարակալման (խոզեր և մանր եղջերավոր կենդանիներ) գործընթացի արդյունավետ շարունակականության ապահովում: